

**Կ. ՊՈԼՍԻ «ՄՈՒՐԱԴՅԱՆ ԵՎ ՌԱՓԱՅԵԼՅԱՆ  
ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԱՍՈՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

*Բանալի բառեր – Մխիթարյան միաբանություն, Վենետիկ, Փարիզ, թանգրիմաթ, բարեփոխում, կրթություն, վարժարան, միություն, մասնություն, օրյակ*

1840-ական թվականների պոլսահայ երիտասարդ մտավորականները և «Եվրոպականացած» վաճառականները հիմնականում Փարիզում և Վենետիկում կրթություն ստացած, եվրոպական լուսավորության և հասարակական առաջընթացի գաղափարներով ոգևորված մարդիկ էին: Նրանք՝ Բարձրագույն կրթություն ստանալու, եվրոպական քաղաքակրթության, գիտության, արվեստի, մշակույթի ձեռքբերումներին մոտիկից հաղորդակից լինելու գործին էականորեն նպաստեց սուլթան Աբդուլ Մեջիդի՝ 1839 թ. նոյեմբերի 9-ին հռչակած Գյուլիանեի «Հաթըր շերիֆ» հրովարտակը<sup>1</sup>: Դրանով Օսմանյան կայսրությունում բացվեց թանգրիմաթի դարագլուխը, որը բարեփոխումներ էր խոստանում ոչ մուսուլման ժողովուրդների համար:

Մինչ թանգրիմաթի հրապարակումը Օսմանյան կայսրության հպատակ բոլոր ժողովուրդները ռայայի կարգավիճակ ունեին և զրկված էին քաղաքական իրավունքներից: Նրանք չէին կարող ծառայել օսմանյան բանակում, ստանալ բարձրագույն կրթություն, զբաղեցնել պետական պաշտոններ: Այս առումով բացառություն էին հայ երևելի ամիրաներից Հարություն բեյ Պեզճյանը, Տյուզյան, Տատյան և Պայյան գերդաստանների ներկայացուցիչները, որոնք տասնյակ տարիներ կարևոր պաշտոններ էին զբաղեցնում թուրքական արքունիքում՝ բացառապես իրենց արհեստավարժության շնորհիվ: Պետական պաշտոններ զբաղեցնելու և բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ոչ մուսուլմաններին շնորհեց թանգրիմաթը, որի ընձեռած հնարավորություններից առաջինը շտապեցին օգտվել արևմտահայերը:

1841 թ. սկսած՝ ոչ մուսուլմաններն իրավունք ստացան սովորելու Կ. Պոլսի զինվորական բժշկական վարժարանում, որի շրջանավարտ բժիշկներն ու դեղագործները զինվորական աստիճանով կարող էին ծառայել օս-

<sup>1</sup> Տե՛ս **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների մասին (1839-1915 թվականներ), Երևան, 2002, էջ 22-27:

մանյան բանակում<sup>1</sup>: Քանի որ օսմանյան վարժարանները ժամանակի կրոնական «մոլեռանդական պահանջմանց համաձայն ի սկզբան միայն իսլամաց յատուկ էին, հպատակ ժողովուրդները իրենց ներքին ուժերովը ճիգեր ըրին՝ իրենց կարողութեան չափովը ձեռք բերել նախակրթութենէն աւելի բան մը, պահելով աւելի բարձր վարժարաններ, ժամանակի ըմբռնումներուն համեմատ»<sup>2</sup>:

Կ. Պոլսի հայոց առաջին բարձրագոյն հաստատութեան դերը վիճակվեց Հարություն բեյ Պեզճյանի (1771-1834) հովանավորությամբ և Կարապետ պատրիարքի հսկողությամբ բացված Ժառանգավորաց վարժարանին: 1828-1832 թթ. այստեղ հիմնական դասավանդողը գիտնական, բառարանագիր, փիլիսոփա և մանկավարժ Գրիգոր պատվելի Փեշտիմալճյանն (1774-1837) էր, որն ուսուցանում էր հայերեն, ճարտասանություն և տրամաբանություն<sup>3</sup>: Այս անդրանիկ բարձրագոյն վարժարանի աշակերտներն էին Գրիգոր Քերեստեճյանը (1813-1882)՝ Կ. Պոլսի ապագա Գևորգ պատրիարքը, և Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Ամենայն հայոց կաթողիկոսը, բանաստեղծ, ազգային երեսփոխան Խաչատուր Միսաքյանը (1815-1891), տնտեսագետ, հրապարակախոս Նիկողայոս Զորայանը (1821-1859), գիտնական, պատմաբան, հրապարակախոս Հովսեփ Վարդանյանը (Վարդան փաշա 1815-1879), հոգևոր գործիչներ Թադևոս Հյունքեարպեյեցիայանը, Գրիգոր Աճեմյանը, Հովհաննես Տ. Պողոսյանը, Գալուստ Տ. Պողոսյանը, որոնք հետագայում «մեր մտաւորական եւ հանրային կեանքին մէջ նշանաւոր դերեր պիտի կատարէին ժամանակին ամենէն զարգացած անձերը ներկայացնելով»<sup>4</sup>: Վարժարանում դասավանդվող միակ եվրոպական լեզուն իտալերենն էր, որի գիտակը Փարիզում կրթություն ստացած Խաչատուր Պարտիզպանյանն (1809-1856) էր: Սկսած 1834 թվականից՝ թուրքական իշխանությունների հրահանգով պետական վարժարաններում իտալերենից բացի դասավանդվում էր նաև ֆրանսերեն:

1834 թ.՝ Հ. Պեզճյանի մահից հետո, վարժարանը դադարեց գործելուց և որպես կրթական բարձրագոյն հաստատություն նրա տեղը գրավեց 1836 թ. Խասիգյուղում հիմնված Ներսիսյան վարժարանը, որտեղ դասավանդվող հիմնական օտար լեզուն իտալերենն էր, այնուհետև՝ ֆրանսերենը: Այս վարժարանը գործում էր պոլսահայ երևելի բարերարներ Մկրտիչ Ճեզպիրյան (1805-1861) և Հարություն Ներուզյան ամիրանների բացառիկ ջանքների շնորհիվ: Վարժարանում սովորում էին շուրջ 600 աշակերտ, որոնք ավելի շատ

---

<sup>1</sup> Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառությունը: Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիվանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1910, էջ 177:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 182:

<sup>3</sup> Տե՛ս **Մալեան Մ.**, Գրիգոր պատուելի Փեշտիմալճեան (1774-1837), Գահիրե, 1912:

<sup>4</sup> **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 183:

աշխարհիկ և գիտական կրթություն էին ստանում<sup>1</sup>, քան Մայր եկեղեցու ուսումնարանի սաները, որի կրթությունը կրոնական ուղղվածություն ուներ: Այս վարժարանը գործեց երկու տարի և փակվեց այն բանից հետո, երբ լուրեր տարածվեցին, թե այնտեղ բողոքականություն է քարոզվում: Այդ պայմաններում բարեբարներից Մկրտիչ ամիրա Ճեզայիրյանը, որը բազում բարեգործություններով «իր անունը փառքի և ճոխութեան առասպելային դրվագների» էր հասցրել և «իր փառքի հետ գիտցած էր նաև զուգորդել բարիքը»<sup>2</sup>, չցանկացավ շարունակել վարժարանի հովանավորությունը<sup>3</sup>:

Վարժարանի փակումից հետո ազգային լուսավորության և կրթության ջատագովներ Կարապետ ամիրա Պալյանը (1800-1866) և նրա քեռայր Հովհաննես ամիրա Սերվերյանը նախաձեռնեցին ստեղծել գիշերօթիկ բարձրագույն կրթարան: Այդ նպատակով դեռևս 1836 թ. օգոստոսի 26-ին Ստեփանոս Աղավնի պատրիարքի նախագահությամբ ժողով հրավիրվեց, որը որոշեց Սկյութարում գտնվող Երուսաղեմի վանքի տեղում ստեղծել ճեմարան: Եռահարկ այս կրթարանը կոչվեց Ազգային ճեմարան Ս. Երուսաղեմի, որի բացումը տեղի ունեցավ 1838 թ. սեպտեմբերի 13-ին: Կ. Պոլսի յուրաքանչյուր թաղամասից ճեմարան ընդունված 50 աշակերտները՝ «զվարժեալսն ի նախակրթական ուսմանս՝ զտայս ուշիմս եւ մտաւարժ»<sup>4</sup>, դեկտեմբերին սկսեցին իրենց ուսումնառությունը:

1839 թ. մարտի 13-ին պատրիարք դարձած Հակոբոս Սերոբյանը ճեմարանի հովանավորներ Պալյան և Սերվերյան ամիրաների աջակցությամբ քայլեր ձեռնարկեց ֆինանսական դժվարությունների առաջ կանգնած ճեմարանի գործունեությունը շարունակելու ուղղությամբ, սակայն հաջողության չհասավ: 1841 թ. Սկյութարի ճեմարանը փակվեց պատրիարքարանի և Կ. Պոլսի մի խումբ ամիրաների տարաձայնությունների պատճառով:

Քանի որ Օսմանյան կայսրության հիմնած մասնագիտական վարժարանները փակ էին ոչ մուսուլմանների համար, Կ. Պոլսի երևելի ամիրաներ Պալյանները, Սերվերյանները, Օտյանները, Ճեզայիրյանները կամովին եվրոպական վարժարաններ ուղարկեցին ընդունակ, աշխատասեր և ուշիմ հայորդիների, որոնք, կրթություն ստանալով, ծառայեցին թե՛ ազգին և թե՛ պետությանը: Բարձրագույն կրթություն ստանալու համար պոլսահայ երիտասարդները հիմնականում մեկնում էին Իտալիա: Հռոմի, Պիզայի և Պադուայի համալսարաններում ուսանել և բժշկի մասնագիտություն էին ստացել Պողոս Շաշյանը (1744-1814), Միքայել Ռեստեն (1776-1843), Հովակիմ

---

<sup>1</sup> Տե՛ս **Նազիկյան Գ. Ս.**, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969, էջ 76:

<sup>2</sup> **Զարդարեան Վ.**, Յիշատակարան (1512-1933): Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները եւլն. եւլն., հ. Ա-Ե, Գահիրէ, 1933, էջ 2-54, 3-55:

<sup>3</sup> Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 184:

<sup>4</sup> **Պերպերեան Ա.**, Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 261:

Օղուլլուխյանը (1746-1815), Մանուել Շաշյանը (1775-1858), Անդրեաս Պոպովիչը (1809-1858), Պողոս Շաշյանը (1806-1887), Սերովբե Վիչենյանը (1815-1897), Հակոբ Տավուսյանը (1813-1878), Ռուբեն Փափազյանը (1806-1857) և ուրիշներ: Կոզմոս Քեոմուրճյանը, Հովսեփ Թագվուզճյանը (1808-1844), Սկրտիչ Աղաթունը (1820-1890) նույնպես կրթություն էին ստացել Իտալիայում: Վենետիկի Մխիթարյանների մոտ կրթվել և դաստիարակվել էին Գևորգ Նշաստաճյանը, Հովհաննես Եղեկյանը և այլ անվանի հայորդիներ<sup>1</sup>:

Իտալիա մեկնած պոլսահայերը կրթություն էին ստանում հատկապես Մուրադյան և Ռափայեյան վարժարաններում: 1834 թ. եվրոկացի մեծահարուստ վաճառական Սամուել Մուրադյանի (1760-1816) կտակի համաձայն՝ Վենետիկի Մխիթարյանները Պադուայի Prato della Valle թաղամասում բացեցին Մուրադյան վարժարանը<sup>2</sup>, որի սաներ դարձան հիմնականում պոլսահայերը: Նրանց կրթության գործը ստանձնեցին Կ. Պուլսի երևելի ամիրանների գերդաստանները: Մուրադյան վարժարանում կրթություն ստացան բանաստեղծ Սկրտիչ Պեշկոթաշյանը (1828-1868), արձակագիր, մշակութային գործիչ Հովհաննես Հիսարյանը (1827-1916), Անտուան Սոֆեալը, բանասեր Հակոբ Թագվուզճյանը և ուրիշներ<sup>3</sup>:

1836 թ. սեպտեմբերին հնդկահայ հարուստ վաճառական Էդուարդ Ռափայելի Ղարամյանի (1730-1795) միջոցներով Մխիթարյան միաբանները Հակովբոս վարդապետ Ճելալյանի և Սարգիս վարդապետ Թեոդորյանի (1783-1877) ջանքերով Վենետիկի Ca Pesaro պալատում հիմնեցին Ռափայելյան վարժարանը<sup>4</sup>, որը 1850 թ. տեղափոխվեց ավելի ընդարձակ պարտեզներ ունեցող Ca Zenobio պալատը: Ռափայելյան վարժարանում 1841-1850 թթ. որպես ուսուցիչ և տեսուչ աշխատել է 1838 թ. Մխիթարյան միաբանության անդամ, բանաստեղծ, բանասեր, պատմաբան Ղևոնդ Ալիշանը (1820-1901)<sup>5</sup>: Վարժարանում դասավանդել են նաև Մխիթարյան միաբանության հայտնի դեմքեր Սարգիս Թեոդորյանը, Մինաս Նուրիխանը, Վարդան Հացունին, Արսեն Ղազարյանը, Սկրտիչ Ավգերյանը, Ա. Գասքանտիլյանը և ուրիշներ<sup>6</sup>: Ռափայելյան վարժարանի շրջանավարտներից էին բանաստեղծ Թովմաս Թերզյանը (1838-1909), թատերական գործիչ Սրապիոն Հեքիմյանը (1832-1892), Սկրտիչ Աճեմյանը, Ա. Արապյանը և ուրիշներ: Մուրադյան և Ռափայելյան վարժարանների շրջանավարտները հետագայում լուրջ դերակա-

<sup>1</sup> Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 225, Մեզպուրեան Ա. Ն., Հայ և ծագումով հայ բժիշկներ (1688-1940), Բյթանպուլ, 1950, էջ 55:

<sup>2</sup> Տե՛ս Թեոդորեան Ս., Պատմութիւն Մուրատեան վարժարանին, հ. Ա., Փարիզ, 1857, էջ 6:

<sup>3</sup> Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 248:

<sup>4</sup> Տե՛ս Թեոդորեան Ս., Պատմութիւն Մուրատեան եւ Հայկազեան վարժարանաց, հ. Բ, Փարիզ, 1866, էջ 8-9:

<sup>5</sup> Տե՛ս Շոխիյան Ս., Ղևոնդ Ալիշան // «ՊԲՀ», 1970, թիվ 2, էջ 13-26:

<sup>6</sup> Տե՛ս Հայկական մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, պրակ առաջին, Ա-Թ, Վենետիկ, 1909, էջ 34-68:

տարում ունեցան արևմտահայ հասարակական, քաղաքական, ազգային, կրթական և մշակութային կյանքում: Նրանցից շատերը դարձան նաև արևմտահայ ազգային սահմանադրական շարժման գործիչներ և գաղափարախոսներ, գաղտնի կազմակերպությունների, ընկերությունների, միությունների հիմնադիրներ ու մասնական օթյակների անդամներ:

1846 թ. Մուրադյան վարժարանը տեղափոխվեց Փարիզ՝ Բուրբոն-Կոնդե հյուրանոցը, որը 1845 թ. Սամուել Մուրադյանի միջոցներով ձեռք էին բերել Մխիթարյան միաբանները: 1846 թ. հունիսի 11-ին Ֆրանսիայի թագավոր Լուի Ֆիլիպը հրովարտակով վավերացրեց վարժարանին տրված արտոնագիրը: Այն իր աշխատանքներն սկսեց հոկտեմբերին և կարճ ժամանակում դարձավ պոլսահայ ուսումնաստենչ երիտասարդության բարձրագույն կրթություն ստանալու հիմնական կենտրոնը: Հայ ազգայնականության տեսանկյունից այն առավել մեծ կարևորություն ստացավ, երբ 1848 թ. ֆրանսիական հեղափոխության տարում Սարգիս վարդապետ Թեոդորյանը մնաց վերատեսուչի պաշտոնում, իսկ Գաբրիել վարդապետ Այվազովսկին (1812-1879) նշանակվեց այդ կրթական հաստատության տնօրեն և վարիչ: Նրանից բացի, վարժարանում դասավանդում էին Ամբրոսիոս (1825-1906) և Խորեն (1831-1892) Գալֆայան վարդապետները, երկուսն էլ «ազգային ոգով առլեցուն անձեր, որոնք Մուրատեան վարժարանը գերազանցապես փայլեցուցին»<sup>1</sup>: Վարժարան ընդունվեցին բազմաթիվ հայ աշակերտներ, «որոնց ներշնչուած գաղափարները գերծ էին կղերական կաշկանդիչ մտածութիւններէ, վասնզի մասնատրապէս Այվազովսքի, հակառակ իր վանականի հանգամանքին զիտակ էր ժողովրդական պահանջներու, մանաւանդ որ գրեթէ իր կեանքին մեծ մասը վանքէն դուրս, ժողովրդին մէջ անցուցած էր»<sup>2</sup>: 1848-1855 թթ.՝ եկեղեցական և հասարակական գործիչ, բանասեր և պատմաբան, մանկավարժ ու թարգմանիչ, Մխիթարյան միաբանության անդամ Գ. Այվազովսկու տնօրեն աշխատած տարիներին, Մուրադյան վարժարանը «իր հավասարը ոչ ունեցած էր և ոչ այլ յետոյ ունեցաւ»: Գ. Այվազովսկին «լուսամտութեան և անկաշկանդ մտածման մարդ էր», որը ցանկալի չէր նրա «անցկամիտ միաբանակիցներուն մեծամասնութեանը»<sup>3</sup>: Այս հանգամանքը դարձավ նրա պաշտոնանկության պատճառը:

Մուրադյան վարժարանում կրթություն ստացան պոլսահայ երևելի ամիրայական գերդաստանների զավակները և մեծ թվով ընդունակ ու ուսումնաստենչ երիտասարդներ: Նրանցից ճարտարագետ Հարություն Տատյանը, ճարտարապետ Ստեփան Մերվերյանը, բժիշկներ Հարություն Պալյանը, Նահապետ Ռուսինյանը (1819-1876), Հովսեփ Մեքինյանը, գյուղատնտես Գրիգոր Աղաթոնը (1825-1867), նկարիչներ Մկրտիչ Մյուհենտիսյանը, Աբրա-

<sup>1</sup> Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 240:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 241:

համ Սախաստյանը, դեղագործ Հովհաննես Մինանյանը 1846 թ. վերադարձան հայրենի Կ. Պոլիս<sup>1</sup>: 1847 թ. վարժարանն ավարտեցին Միհրան Տատյանը, Հարություն Երամյանը, Մատթեոս Մամուրյանը (1830-1901), Անտոն Կանտարյանը, Վիզեն Կուփեյանը և Ռուբեն Փառլադյանը:

Մուրադյան վարժարանի հայտնի շրջանավարտներից էին Բարձր դռան գանձապահ Հովհաննես-Սարգիս Տատյանը (1836-1912) և իրանահայ լուսավորիչ, պետական նշանավոր գործիչ, դիվանագետ Միրզա Մալքում խանը (1833-1908)<sup>2</sup>: Նա 1858 թ. Իրանում հիմնեց «Ֆարամուշ խանե» անվանումով առաջին մասոնական օթյակը<sup>3</sup>: Մեծ բարենորոգիչ, սահմանադրական շարժման նախահայր Մալքում խանը դարձավ Իրանում ազատ որմնադիրների գաղափարների առաջին տարածողը, դրանց կրողն ու ջատագովը:

Այս երիտասարդները հաջողությամբ յուրացրին 1848 թ. ֆրանսիական հեղափոխության փրկարար սկզբունքները: Փարիզը նրանց համար դարձավ լուսավորության կենտրոն, որտեղ համախմբվեցին հայ երիտասարդ մտավորականության ուժերի մեծամասնությունը, «ազգին ընտրելագոյն մասը, այն որ առաջնորդ, առաջապահ և ղեկավար ըլլալու կոչուած էր»<sup>4</sup>: Նրանցից մեկը Մուրադյան վարժարանում կրթություն ստացած շնորհալի դերասան, «ազգային դերասանութեան հայր եւ սկիզբ»<sup>5</sup> համարվող հայ բեմի նվիրյալ Ստեփան Էքշյանը (1834-1901)<sup>6</sup> էր: Նրա «ամենամեծ հատկությունը միշտ յառաջադիմութեան փափաքիլն»<sup>7</sup> էր, ուստի պատահական չէ, որ հետագայում դարձավ հայկական «Տիգրան» և «Մեր» օթյակների անդամ<sup>8</sup>:

1849 թ. Մկրտիչ ամիրա Ճեզայիրյանի հովանավորությամբ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Իզմիրից ֆրանսիական շոգենավով Փարիզ մեկնեցին «երկու բանիբուն երիտասարդներ»՝ Գրիգոր Աղաթոնը (1825-1867) և Գևորգ Մթիմարճյանը<sup>9</sup>: Մուրադյան և Ռափայեյան վարժարաններում կրթություն ստացած հայորդիներն ազգասեր մարդիկ էին, իրենց «ձգտումներուն մեջ թեև տակավին տարտամ, անորոշ, բայց դեպի ազատ

---

<sup>1</sup> Տե՛ս Գукасян В. Г., Константинопольские армяне и национально-просветительское движение, Ереван, 1989, с. 92:

<sup>2</sup> Տե՛ս Jamgocyan O., Les Francs-Maçons Arméniens et la Constitution de l'Arménie ottoman, Constantinople, 1863, Paris, 2017, p. 35:

<sup>3</sup> Տե՛ս Анаркулова Д. М., Общественно-политическая деятельность Мальком-хана, Душанбе, 1984, с. 67, Арабаджян З. А., Иран: власть, реформы, революция (XIX-XX вв.), Москва, 1991, с. 19, Галипов Н. А., Общественная мысль в Иране в XIX – начале XX в., Москва, 1988, с. 52:

<sup>4</sup> Ալլադաճեան Ա., նշվ. աշխ., էջ 242:

<sup>5</sup> «Հանդես ամսօրեայ», 1887, նոյեմբեր, թիվ 11, էջ 173:

<sup>6</sup> Շարասան, Թրքահայ բեմն և իր գործիչները (1850-1908), Կ. Պոլիս, 1914, էջ 25:

<sup>7</sup> «Մեղու», 1862, թիվ 175:

<sup>8</sup> Պէլլէրեան Ա., Ազատ-որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն և Պոլսոյ հայկական «Մէր» օթեակը ԺԹ դարուն // «Հայկազեան հայագիտական հանդես» (այսուհետև՝ «ՀՀՀ»), 2001, էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 72:

<sup>9</sup> «Արշալոյս Արարատյան», 1849, թիվ 348:

հայրենիքի մը գաղափարը կարփաթներ»<sup>1</sup>: Նրանցից շատերը իրենց կարողությունների ներածին չափով ծառայեցին ազգին, միաժամանակ զբաղվեցին հասարակական գործունեությամբ: Փարիզում պոլսահայ երիտասարդները ուսումնառության տարիներին ծանոթացել էին ֆրանսիական նշանավոր պատմաբաններ Ֆրանսուա Գիզոյի, Օգյուստեն Տիերի, Լուի-Ադոլֆ Տիերի և այլոց՝ XVIII դարի Ֆրանսիական հեղափոխությանը, ժողովրդավարությանը և դասային պայքարին նվիրված ուշագրավ ուսումնասիրություններին, Վիկտոր Բուզենի աշխատություններին, լսել ռոմանտիկական պատմագրության փայլուն ներկայացուցիչ Ժյուլ Միշլեի, Էդգար Քինեի դասախոսությունները: Ուսումնատենչ պոլսահայ երիտասարդները կարդացել էին անվանի գրողներ Վիկտոր Հյուգոյի, Ալֆոնս դը Լամարտինի, Պյեր Ժան դը Բերանժեի, Ֆրանսուա դը Շատոբրիանի ստեղծագործությունները, ոգևորվել նրանց հերոսներով: Փարիզում փայլուն կրթություն ստացած, 1848 թ. ֆրանսիական հեղափոխության ականատես, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը (1834-1887) հետագայում այդ մասին գրում է. «Ահա այս և այսպիսիք էին այն հանճարք բազմաբեղուն որ 48ի սերունդը պատրաստեցին»<sup>2</sup>:

Փարիզում ուսանող պոլսահայ երիտասարդների գաղափարական ձևավորման վրա էական ազդեցություն թողեցին մասոնական օթյակների նախաձեռնած և գլխավորած 1848-1852 թվականների եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը, ազգային միավորման և սահմանադրական շարժումները<sup>3</sup>: Եվրոպական երկրներում տեղի ունեցած «հեղափոխական խմորումները», ի թիվս այլ ժողովուրդների, «արձագանք գտան հայ ազգին մեջ»<sup>4</sup>: 1840-ական թվականներին Փարիզում սովորող հայ ուսանողներից Նահապետ Ռուսինյանը, Հովսեփ Շիշմանյանը (Օերենց, 1822-1888), Գրիգոր Օտյանը, Նիկողոս Պալյանը (1826-1858), Հովհաննես Վահանյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Ստեփան Էքշյանը և ուրիշներ ֆրանսիական հեղափոխության ականատեսներն էին, իսկ Ստեփան Ոսկանյանը (1825-1901) Փարիզի մի խումբ ուսանողների հետ գրոհեց թագավորական Տյուիլրի պալատը<sup>5</sup>: Եվրոպական հեղափոխական և ազգային-ազատագրական պայքարից ու շարժումներից հատկապես «1848-ի ֆրանսիական յեղափոխութեանն են պարտական մեր կեանքի յառաջադիմութեան

---

<sup>1</sup> «Նոր կեանք», 1899, թիվ 1, էջ 181:

<sup>2</sup> **Օսեան Գ.**, Առաջարան Ռուսինեանի «Դասագիրք փիլիսոփայութեան» գործին, Կ. Պոլիս, 1879, էջ 6:

<sup>3</sup> Sté u **Вейл Ж.**, История республиканской партии во Франции с 1814 до 1870 гг., Москва, 1906, с. 57, История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 3, Москва, 1938, с. 349, **Ридли Дж.**, Фримасоны. Люди творящие мировую историю. Пер с англ., Москва, 2007, с. 252-257, 264-265:

<sup>4</sup> **Ալպոյաճեան Ա.**, Զմյուռնիո տպարանները // «ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 79:

<sup>5</sup> «Արեւմուտք», 1859, թիվ 17, էջ 132:

երևույթներից շատերը»<sup>1</sup>: 1848 թ. ֆրանսիական «ներողամիտ, վեհանձն և մարդկային զգացմամբ լի հեղափոխութեան»<sup>2</sup> գաղափարների ազդեցության տակ տեղի ունեցավ Մուրադյան և Ռափայեյան վարժարաններում կրթություն ստացող պոլսեցի և գմյուռնիացի հայ երիտասարդների ծանոթությունը մասնության հետ: Նրանց մի մասը դեռևս ուսումնասիրության տարիներին դարձավ եվրոպական մասունական օթյակների անդամներ: Այս հարցը հայ պատմագիտության կողմից տակավին ուսումնասիրված չէ: Այդ երիտասարդներից Ն. Ռուսիայանը և Ն. Պայանը, տպավորված ֆրանսիական հեղափոխության գաղափարներով, «մղուեցան այդ մեղմ, վեհանձն և ներողամիտ ուղղութեամբ բարեփոխել մեր ազգային ճակատագիրը, ձգտելով առաջ բերելու ինչ որ ֆրանսիացիք հաջողած էին ստանալու»<sup>3</sup>: Գրիգոր Օտյանի բնութագրմամբ՝ բնավորությամբ միմյանցից տարբեր և միմյանց լրացնող, բայց գաղափարական համախոհներ Ն. Ռուսիայանը և Ն. Պայանը<sup>4</sup>, ինչպես նաև Փարիզում կրթություն ստացող պոլսահայ մյուս երիտասարդները դարձան հայոց մտավորական շարժման առաջնորդները:

1849 թ. ապրիլին Փարիզում սովորող Ն. Ռուսիայանը, Հ. Շիշմանյանը, Հովհաննես Արզուման Վահանյանը, Հովսեփ Պեյրանը, Խաչատուր Պարտիզյանյանը և ուրիշները ստեղծեցին «Արարատյան ընկերությունը», որը 1849 թ. հունիսի 7-ին հրապարակեց իր «Հայտարարությունը», որտեղ հանգամանորեն շարադրված էին ընկերության նպատակը, խնդիրները և գործունեության ոլորտները: Հայտարարությունը կոչ էր անում «բոլոր ազնիվ և ազգասեր սրտերին» աջակցել իրենց ընկերությանը ֆինանսապես, որպեսզի այն ծառայի «ազգային բարեկարգութեանը», օգտակար գործեր կատարի ազգի համար, քարոզի «ազգասիրութիւն և մարդասիրութիւն»<sup>5</sup>:

Հայտարարությունում նշվում էր, որ ընկերության հիմնադիրները իրենց առջև խնդիր են դրել «հայ ազգին յառաջադիմութեանը և պիտոյիցը ծառայել, անոր կարոտութեանց նեկուն հասնիլ»<sup>6</sup>: Ընկերությունը չպետք է զբաղվեր կրոնական ու քաղաքական հարցերով և յուրաքանչյուր տարի ընտրելու էր նախագահ, ատենապետ և գանձապետ: Նրանք պարտավոր էին ամիսը մեկ անգամ հրավիրել ժողով և քննարկել իրենց մտահոգող հարցերը: Ընկերության անդամները վճարում էին անդամագրման և ամսական անդամավճար:

«Արարատյան ընկերության» առաջին նախագահ ընտրվեց Հովհաննես Արզուման Վահանյանը, որը հետագայում դարձավ օսմանյան բարձրաստի-

<sup>1</sup> Աճառեան Հ., Պատմութիւն Հայոց նոր գրականութեան, Պէյրուս, 1940, էջ 34:

<sup>2</sup> Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, էջ 237:

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս Օտեան Գ., նշվ. աշխ., էջ 8:

<sup>5</sup> «Արշալոյս Արարատյան», 1850, թիվ 366:

<sup>6</sup> Նոյն տեղում, «Հայաստանի կոչնակ», 1927, թիվ 11, էջ 329:



ճան պաշտոնյա: 1876 թ. նա նշանակվեց Թուրքիայի դատական (արդարադատության) նախարարի առաջին խորհրդական և որոշ ժամանակ կատարեց նաև նախարարի պարտականությունները<sup>1</sup>: Ընկերության ատենադպիր ընտրվեց ուսանելու տարիներին ֆրանսիական օթյակի անդամ դարձած Հովսեփ Շիշմանյանը (Շերենց)<sup>2</sup>, որը Գ. Օտյանի բնութագրմամբ՝ «հմուտ և ազգասեր հայ էր»<sup>3</sup>: Ավելի ուշ Շերենցը անդամագրվեց 1862 թ. Կ. Պոլսում հիմնված ֆրանսիական «Արևելքի միություն» («L'Union d'Orient») օթյակին<sup>4</sup>:

«Արարատյան ընկերության» հիմնումը ողջունեց «Արշալույս Արարատյան» թերթի խմբագիր Ղուկաս Պալղազարյանը (1810-1878), որը շուտով դարձավ Զմյուռնիայի «Տիգրան» օթյակի անդամ: Նա ընկերության կանոնները համարում էր «խիստ օրինավոր» և կարծիք հայտնում, որ այսպիսի «բարենպաստակ ընկերութիւնը Ազգիս երևելաց և հասարակութեան համակրական սիրոյն և ձեռնատուութեանը վրայ իրավունք կրնան ունենալ»<sup>5</sup>:

«Արարատյան ընկերության» գործունեության մասին չափազանց քիչ բան է հայտնի, ուստի դժվար է ասել, արդյո՞ք այս ընկերության անդամները հասան իրենց նպատակին, թե՞ ոչ: Բայց անկախ դրանից՝ աներկբա է մի բան. նրանք մշակել էին միութամբ և հավաքական ուժերով աշխատելու ազգանվեր ծրագիր և պատրաստ էին ծառայել հայության կրթության և դաստիարակության գործին: Նրանց կազմած ծրագրի իրականացմանը հետագայում ձեռնամուխ եղան Կ. Պոլսում հիմնված ազգային ընկերությունների, միությունների անդամները, ինչպես նաև եվրոպական մասոնական օթյակներին անդամագրված «նոյն սերնդին այդ ընտիր մարդիկ»: Այդ երիտասարդները լավ էին հասկանում, որ Փարիզում ձեռք բերած իրենց գիտելիքներն ու գաղափարները պետք է անպայման իրականություն դարձնեն հայրենի Կ. Պոլսում:

Այդ տարիներին արդեն Կ. Պոլիս էին վերադարձել առաջադիմության, լուսավորության և մասոնական գաղափարներով ոգևորված Հ. Կրճիկյանը, Ս. Վիչենյանը, Գ. Աղաթոնը, Գ. Սթիմարճյանը, Առաքել և Հարություն Տատյանները, Նիկողոս Պալյանը, որոնք ներկայացնում էին Փարիզի «այդ գաղափարական միութիւնը Կ. Պոլսոյ մէջ»: Նրանցից հատկապես Ն. Ռուսինյանի համախոհներ Հ. Կրճիկյանը (1806-1865), Ն. Պալյանը և Ս. Վիչենյանը «կը վարեին ազգային գործոց մէջ ազատականներու փոքրիկ խմբակը, զգուշավորութեամբ ու խոհեմութեամբ, և հաճախ գաղտնի գործակցելով անոնց հետ, որոնք կը պայքարէին սեղանաւոր Ամիրաներու խմբակին դէմ»<sup>6</sup>: Թան-

<sup>1</sup> Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 246:

<sup>2</sup> «Արշալույս Արարատյան», 1850, թիվ 366, **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 244-247:

<sup>3</sup> **Մեզպուրեան Ա. Ն.**, նշվ. աշխ., էջ 147:

<sup>4</sup> Տե՛ս **Պէլլերեան Ա.**, նշվ. աշխ., էջ 175:

<sup>5</sup> «Արշալույս Արարատյան», 1850, թիվ 366:

<sup>6</sup> **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 247-248:

զիմաթի դարաշրջանի հանրային, հասարակական և ազգային խոշոր գործիչ, դիվանագետ Հակոբ Կրճիկյանը 1840-ական թվականներին Փարիզում գտնված տարիներին անդամագրվել էր ֆրանսիական «Հարատևող բարեկամություն» («La Preseverante») օթյակին<sup>1</sup>: 1847 թ. Կ. Պոլսի Գերագույն ժողովի լոգոֆերի պաշտոնն ստանձնած Հ. Կրճիկյանը «ի բնե եռանդուն ազգասիրութեամբ վառեալ, ազգին անբարեկարգ եւ խառնաշփոթ վիճակին դարման մ'ընելու կ'զբաղէր»<sup>2</sup> Հ. Կրճիկյանը և Ն. Պալյանը արևմտահայ ազգային սահմանադրական շարժման սկզբնավորողներն էին<sup>3</sup>: Ազգի բարօրությունն ու առաջադիմությունը փափագող մասուն Հ. Կրճիկյանը հիրավի «դարուս մէջ երեւցած նշանաւոր ազգայնոց առաջիններէն մէկն է թէ անձնական արժանեօքը, թէ քաղաքական մասին ունեցած դիրքովը, եւ թէ ազգին մատուցած կարևոր ծառայութեամբք»<sup>4</sup>:

Այս ազատաբաղձ և հայրենասեր երիտասարդ մտավորականների շարքերը համալրվեցին հատկապես Արևելյան (Ղրիմի) պատերազմի ավարտից հետո, երբ եվրոպական մեծ տերությունների հարկադրանքով սուլթան Աբդուլ Մեջիդը 1856 թ. փետրվարի 18-ին «Հաթթը հյումայուն» հրովարտակով պարտավորվեց բազմաթիվ բարենորոգումներ իրականացնել և առանձին արտոնություններ շնորհել քրիստոնյա հպատակներին<sup>5</sup>: Սուլթանի հրովարտակի «մեծադորդ խոստումները»<sup>6</sup> և 1856 թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածում ամրագրված «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների հարկադրանքը<sup>7</sup> և այդ կապակցությամբ նրա ստանձնած պարտավորությունները «վարդագույն հեռանկարներ էին բացում և վառվռուն հույսեր էին ներշնչում»<sup>8</sup> արևմտահայությանը:

Թանգիմաթի երկրորդ փուլում Օսմանյան կայսրությունում ձևավորված հասարակական, քաղաքական և կրթամշակութային նոր մթնոլորտը, լուսավորության և ազատամտական գաղափարների ազդեցությունը եվրոպական կրթություն ստացած արևմտահայության համար դարձան «խիստ կարևոր դարագլուխ»<sup>9</sup> և լրջորեն խթանեցին հայ հասարակական մտքի զարգացումը: 1850-1860-ական թվականներին հայ հրապարակախոսության և հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորումը, ազգային սահմանադրական շարժումը, գրական, հասարակական, գիտական և մշակութային կյան-

<sup>1</sup> Տե՛ս **Պէլլիբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 151,155, **Jamgocyan Օ.**, նշվ. աշխ., էջ 64:

<sup>2</sup> «Մասիս», 1865, թիվ 713:

<sup>3</sup> Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Գ, մասն Ա, Պէլրութ, 1961, էջ 3814:

<sup>4</sup> «Մասիս», 1865, թիվ 713:

<sup>5</sup> Տե՛ս **Փափազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 27-35, **Թումանեան Կ.**, Պատմութիւն Արևելեան ինդոյ, Լոնդոն, 1906, էջ 613:

<sup>6</sup> **Թոփչեան Ե.**, Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 240:

<sup>7</sup> Տե՛ս **Փափազեան Ա.**, նշվ. աշխ., էջ 27-35, **Թումանեան Կ.**, նշվ. աշխ., էջ 613:

<sup>8</sup> **Թոփչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 240:

<sup>9</sup> **Ճէներճեան Ա.**, «Մէր» օթյակը // «Հայրենիք», 1956, թիվ 6, էջ 94:

քի աշխուժացումը բարերար ազդեցություն ունեցան արևմտահայության շրջանում մասոնության գաղափարների տարածման համար: Ոգևորված 1848 թ. ֆրանսիական հեղափոխության ազատամտական գաղափարներով՝ արևմտահայ «եվրոպականացած» մտավորականներն ու վաճառականները սկսեցին «ավելի խորխտ քայլեր անել»<sup>1</sup>, որոնց շնորհիվ ստեղծվեցին համագային տարբեր ընկերություններ, միություններ, ծավալվեց սահմանադրական շարժում, իսկ Կ. Պոլսում ու Ջմյուռնիայում հիմնվեցին եվրոպական մասոնական օթյակներ: Նրանց մի մասը մասոն էին դարձել Եվրոպայում ուսանելու տարիներին, իսկ մյուսները 1850-ական թվականներին Կ. Պոլսում անդամագրվել էին եվրոպական «Արևելյան» թիվ 687, «Բոսֆորի աստղ», «Իտալիա» օթյակներին: Նրանց անմիջական ջանքերով ծավալված ազատական և բարենորոգման նոր շարժման անմիջական հետևանքն էր 1857 թ. Ազգային կանոնագիրը և 1860 թ. Ազգային սահմանադրությունը<sup>2</sup>:

1859 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսում Մուրադյան և Ռափայեյան վարժարանների մի խումբ շրջանավարտներ Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում Կ. Պոլսի հայոց պատրիարքի առաջնորդությամբ հանդիսավոր պատարագ մատուցեցին իրենց երկու բարերարների և նրանց ննջեցյալների հոգիների համար: Նույն օրը երեկոյան նրանք Կ. Պոլսի «Համազգեաց ընկերությանը» պատկանող Լալե փողոցի թիվ 13 տանը հիմնեցին «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերությունը»<sup>3</sup>: Հիմնադիր ժողովում նախագահում էր Մկրտիչ Պեշիկթաշյանը: Ընկերության հիմնադիրները հիմնականում «Համազգեաց ընկերության» և Կ. Պոլսում գործող եվրոպական մասոնական օթյակների անդամ էին: Կարծում ենք, նրանց մասոն լինելու հանգամանքով է պայմանավորված հունվարի 7-ի ընտրությունը. բանն այն է, որ մասոնությունում 7-ը համարվում է «սուրբ թիվ» և խորհրդանշում է բանականությունը<sup>4</sup>: «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերության» ստեղծումը առաջիններից մեկն ազդարարեց «Մեճմուայի հավատիս» թերթի խմբագիր Հովսեփ Վարդանյանը: Անվանի գիտնական, պատմաբան, գրող, հրապարակախոս, պետական գործիչ, արևմտահայ սահմանադրական շարժման ակտիվ գործիչ Հ. Վարդանյանը մասոնական գաղափարների կրող էր: Նա իր խմբագրած թերթում տպագրում է թատերական գործիչ, դերասան և բանաստեղծ Սրապիոն Հեքիմյանի՝ ընկերության հիմնադրման ժամանակ ընթերցած «Երգ բաժակին» բանաստեղծությունը, Մկրտիչ Պեշիկթաշյանի ճառն ամբողջությամբ և հատվածներ մյուսների ելույթներից: Ընկերության հիմնադրման պահին Ս. Հեքիմյանը լուրջ առնչություններ ուներ մասոնու-

<sup>1</sup> Թոփչեան Կ., նշվ. աշխ., էջ 240:

<sup>2</sup> Տե՛ս Բեչեան Բ., Պատմութիւն Ս. Փրկչի հիւանդանոցին հայոց, Կ. Պոլիս, 1887, էջ 91, Մինաս Նուրիխան Շ., Ժամանակակից պատմութիւն, մաս Ա., Վենետիկ, 1881, էջ 162:

<sup>3</sup> Տե՛ս «Մասիս», 1860, թիվ 423:

<sup>4</sup> Տե՛ս Կурбатов В. И., Тайное общество масонов, Москва, 2007, с. 109:

թյան հետ: Նա Կ. Պոլսում հիմնված «Արևելյան» («Oriental») օթյակին 1860 թ. անդամագրվելուց հետո կարճ ժամանակում ստացավ օթյակի վարպետի աստիճան, իսկ մի փոքր ուշ՝ դարձավ «Արևելքի միություն» ֆրանսիական օթյակի հիմնադիրներից մեկը<sup>1</sup>: Մուրադյան դպրոցի շրջանավարտ Ս. Պեշկեթաշյանը մասնությունն անդամագրվեց հետագայում՝ 1867 թ.<sup>2</sup> դառնալով Կ. Պոլսի «Մեր» հայկական օթյակի անդամ<sup>2</sup>:

Հ. Վարդանյանը «Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերության» հիմնադրումը համարում է կարևոր երևույթ Կ. Պոլսի հասարակական կյանքում: Նա իր խմբագրած թերթում գրում է. «Յիրալի ազգերնիս զուրկ է քաղաքական կենդանութենե, խոնարհինք աստուածային կամացը առջև: Բայց Յունուարի եօթներորդ օրը մեզի ցուցաց, որ ունինք բարոյական կեանք մը. Առաւել տեւական եւ առաւել ազնիւ, չունինք առիթներ յաղթական կամարներ ու արձաններ կանգնելու մեր դիւցազանց. Բաժին է ասիկա քաղաքական կենդանութիւն վայելող ազգաց. Բայց ունինք դիւցազնական առաքելութեամբ պերճացեալ անձինք եւ ասոնց արգելամբը պսակեալ կենդանի յիշատակներ, կենդանի այսօր եւ կենդանի յաջողութեամբ մինչեւ յաւիտեան: Ասոնք պղինձ չեն եւ ոչ մարմարիոն, այլ իմացականութիւն. իմացականութիւն՝ հոգի աշխարհի, անմահ իբրեւ հոգի եւ ոչ ապականացու իբրեւ նիւթ, յաւիտեան՝ գոր ոչ աշխարհակալը կը կործանէ եւ ոչ թշնամին կը փշրէ»<sup>3</sup>:

Հ. Վարդանյանը մասնական գաղափարախոսությամբ ներկայացնում է ընկերության ստեղծումը, որն առաջին հայացքից սովորական աշակերտական միություն էր թվում: Դա երևում է նաև ընկերության անվանումից, որը քողարկում էր դրա բնույթը: Հավանաբար այս մտայնությունից ելնելով է գրականագետ Վ. Հ. Սաֆարյանը Մուրադյան և Ռափայելյան վարժարանների սաների հիմնած ընկերությունը համարում «Համազգյաց ընկերության» «հետևորդ մի հաստատություն կամ նրա հեռավոր արձագանքներից մեկը»<sup>4</sup>:

Իրականում Եվրոպայում կրթություն ստացած, 1848 թ. հեղափոխությունների և ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով ոգևորված Մուրադյան և Ռափայելյան վարժարանների շրջանավարտները, որոնց մի մասն ընկերության հիմնադրման ժամանակ եվրոպական օթյակների անդամ էր, իրենց ընկերությունը դիտարկում էին այդ գաղափարներին հավատարիմ մնալու և դրանք կյանքի կոչելու տեսանկյունից: Այս միտքը հստակ ընդգծված է Հ. Վարդանյանի հրապարակման մեջ: Դրանից հետևում է, որ

---

<sup>1</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78, «Հայրենիք», 1937, թիվ 6, էջ 128, **Պելլերեան Ա.**, նշվ. աշխ., էջ 157:

<sup>2</sup> «Հայրենիք», 1937, թիվ 7, էջ 122-123, թիվ 8, էջ 129-133:

<sup>3</sup> **Պողոսեան Կ. Եփրեմ վ.**, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Կ. Ա. Վիեննա, 1967, էջ 64:

<sup>4</sup> **Սաֆարյան Վ. Հ.**, Մկրտիչ Պեշկեթաշյան (մահվան 100-ամյակի առթիվ) // «ՊԲՀ», 1967, թիվ 4, էջ 189:

ընկերությունը ստեղծվել է հայությանը «քաղաքական կենդանություն» տալու նպատակով: Նա նշում է, որ հայ ազգը հաղթականարներ և իր դյուցազունների արձաններ չունի, բայց ունի կամք և առաքելություն կենդանի գործերի իրականացման համար, որոնք կմնան հավիտյան: Դա իմացությունն է, որն աշխարհի ոգին է: Ակնարկելով, որ ընկերությունը գործելու է հանուն իմացականության կամ մասունների լեզվով ասած՝ լուսավորության, Հ. Վարդանյանը շեշտում է, որ այդ իմացականության ոգին ո՛չ որևէ աշխարհակալ կարող է կործանել, ո՛չ էլ՝ թշնամին:

Հ. Վարդանյանի պատմածից հետևում է, որ «Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերության» հիմնադրումը կայացել է մասունական օթյակների հավաքությունների նմանությամբ, որի ժամանակ հնչել է երաժշտություն, ճառեր են ասվել, իսկ վերջում տեղի է ունեցել գինեձոն<sup>1</sup>:

Ընկերության հիմնադրման պահին Տնօրեն ժողովի ատենապետ է ընտրվել Մ. Պեշիկթաշյանը, իսկ ատենադպիր՝ «ամէնէն մեծ քնարերգակ բանաստեղծներէն մին»<sup>2</sup>, Թովմաս Թերզյանը: Նա հասարակական ակտիվ գործիչ էր, 1860-ական թվականներին Սերովբե Ազնավուրից հետո դարձավ Մանչեսթրի «Odd Fellows» մասունական օթյակի արտոնագրով Կ. Պոլսում հիմնված «Հայկ» կամ «Օրիոն» մասնաճյուղի ղեկավարը<sup>3</sup>:

Ընկերության կանոնադրությունը չի պահպանվել, որից կարելի էր շատ տեղեկություններ ստանալ դրան անդամակցելու, գործունեության հիմնական ուղղությունների և, որ չափազանց կարևոր է, հետապնդած նպատակի մասին: Քանի որ կանոնադրությունը մեզ չի հասել, ուստի մնում է դատողություն անել ընկերության անդամներից մեկի մահվան ժամանակ հնչած դամբանականից: Այն տպագրել է «Մեճմուայի հավատիս» թերթը: Ճառախոսը մասունական գաղափարախոսությամբ իրենց ընկերության մասին ասել է հետևյալը. «Մուր և հեռատես այք մը թշուառ ազգիս թշուառագոյն վիճակին ակնարկութիւն մ'ըրած ժամանակ, անշուշտ պիտի տեսնայ փոքրիկ միութիւն մը, որ խաւար գիշերուան մը ամպապատ քողէն չի ծածկուած աստղի մը պէս բարձրէն փայլելով, քողարկեալ, բայց լուսաւոր երկինքը կը ներկայացնէ: Իրաւամբ այսպիսի ազնիւ միութիւն մը կը համարինք Մուրատեան եւ Ռափայէլեան վարժարաններու աշակերտաց կաճառը, հաւաստի կրթութեան մը խայրիքը: Այս ազնիւ պատանեակները... ունին իրենց ուղեցոյց... Նաբոլէոն երրորդի այս նշանաւոր պատգամը. Անցեալէն ինչ որ բարի է, պահպանել ու ապագային պատրաստել...: Յանկալի է ուրեմն այսպիսի

---

<sup>1</sup> Սաֆարյան Վ. Հ., նշվ, աշխ., էջ 189:

<sup>2</sup> Պիպերճեան Ա., Ճաշակ արդի հայ մատենագիտութեան, հ. Առաջին, Կ. Պոլիս, 1910, էջ 79-80:

<sup>3</sup> «Հայրենիք», 1954, թիվ 10, էջ 95, 1955, թիվ 6, էջ 95:

միութիւն մը, որ անցյալը ապագային հետ պիտի կապէ, ուր է միայն ազգային դժուարութեանց դժուարագոյնը»<sup>1</sup>:

«Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերության» գործունեության մասին, ցավոք, մեզ հասել են կցկտոր տեղեկություններ: Մասնավորապես հայտնի է, որ 1862 թ. մարտի 15-ին ընկերությունը ստեղծել է յոթ հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը ունեցել է կանոնադրություն: Ըստ այդ կանոնադրության՝ ընկերության բարձրագույն մարմինը եղել է գործադիր ժողովը: 1864 թ. ընկերության նախագահ է ընտրվել դրամատուրգ, բանաստեղծ, բարձրաստիճան մասոն Սրապիոն Հեքիմյանը: Նրա գլխավորությամբ ընկերությունը 1864 թ. հունվարին սովորության համաձայն նշել է իր հիմնադրման հերթական տարելիցը: Տրվել է տարեկան հացկերույթ Բերայում՝ Վալավրիի խանութում, որն անցել է «խիստ վայելուչ և շքեղ կերպով»<sup>2</sup>: Ընկերության այս քայլը նման է մասոնական օթյակներում սահմանված կարգին, ըստ որի՝ յուրաքանչյուր օթյակ ամեն տարի կազմակերպում է հաշվետու ժողով, որն ավարտվում է ճաշկերույթով<sup>3</sup>: Դրան մասնակցել են 60-ից ավելի անդամներ և հրավիրված մի քանի պատվավոր հյուրեր, որոնց թվում է եղել Գրիգոր Օսյանը: Ընկերության նախագահ Ս. Հեքիմյանը, մասոնական սովորության համաձայն, բաժակաձառ է արտասանել, մասնավորապես բաժակ բարձրացրել «ի Կենդանութիւն վեհափառ Ինքնակալին և իր արժանընտիր պաշտօնյաներուն՝ որ անսահման ազատութիւն պարգևած են ուսումնական հաստատութեանց զարգացմանը»: Այնուհետև ոգեկոչել է Մուրադյան և Ռափայելյան վարժարանների հիմնադիրներին: Հաջորդ բաժակաձառերը նվիրվել են Մխիթարյան միաբանությանը, հայ ազգի տնտեսության և արվեստի զարգացմանը, Մուրադյան-Ռափայելյան ընկերությանը և ներկա գտնվողներին: Ճաշկերույթի ընթացքում ընկերության անդամ, Կ. Պոլսի «Մեր» օթյակին անդամագրված դատավոր Տիգրան Յուսուֆյանը<sup>4</sup> ձառ է արտասանել՝ «հայ ազգին համակրութիւնը յայտնելոց վերոհիշյալ երկու վարժարանաց վրայ»<sup>5</sup>:

1868 թ. փետրվարին ընկերությունը տարեկան հերթական ճաշկերույթը կազմակերպել է Կ. Պոլսի «Palais de Christal»-ում: Ընկերության անդամները որոշել են իրենց միջոցներով հրատարակել ընկերության նախկին նախագահ, «Մեր» մասոնական օթյակի անդամ Մկրտիչ Պեշիկջաշյանի գլխավոր գործերը, որն այդ օրերին ծանր հիվանդ գամված էր անկողնուն: Մ. Պեշի-

<sup>1</sup> Պողոսեան Կ. Եփրեմ վ., նշվ. աշխ., էջ 65:

<sup>2</sup> «Մասիս», 1864, թիվ 622:

<sup>3</sup> Տե՛ս **Борзакровский Д.**, Франк-масонство и тайния общества древняго и нового мира, Москва, 1900, с. 39:

<sup>4</sup> Տե՛ս «Հայրենիք», 1955, թիվ 7, էջ 95-96, **Պէլլեռեան Ա.**, ԺԹ դարու հայկական «Մեր» օթյակի անդամ ազատ-որմնադիրներու ընդհանուր ցուցակ // «ՀՀՀ», 2003, էջ 423:

<sup>5</sup> «Մասիս», 1864, թիվ 622:

կթաշյանի այդ ընտրանին լույս տեսավ 1870 թվականին՝ նրա մահից հետո, որը տեղի ունեցավ 1868 թ. նոյեմբերի 28-ին<sup>1</sup>: Նրա վախճանից հետո «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերությունը» հետզհետե դադարեց ակտիվ գործելուց և 1871 թ. փակվեց<sup>2</sup>: Այդուհանդերձ, ընկերության գործունեությունն անհետևանք չմնաց: Ի թիվս պոլսահայ այլ միությունների և ընկերությունների՝ «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերությունը» նույնպես իր ներդրումն ունեցավ արևմտահայ առաջադեմ երիտասարդության շրջանում մասոնության գաղափարների տարածման գործում: Ընկերության անդամները, անդամագրվելով Կ. Պոլսի և Զմյուռնիայի եվրոպական ու հայկական մասոնական օթյակներին, իրենց գործունեությամբ նկատելի հետք թողեցին արևմտահայության հասարակական, քաղաքական, մշակութային և կրթական կյանքում՝ դառնալով լուսավոր փարոսներ Օսմանյան կայսրության խավարչտին իրականությունում:

**Ֆելիքս Մովսիսյան – Կ. Պոլսի «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերության» առնչությունները մասոնության հետ**

Օսմանյան կայսրությունում մինչ թանգիմաթի առաջին փուլում իրականացված բարեփոխումները մասնագիտական վարժարաններում ոչ մուսուլմանները չէին կարող կրթություն ստանալ: Պոլսահայերը ուսանում էին հիմնականում ազգային վարժարաններում, որոնք համակողմանի և աշխարհիկ գիտական կրթություն չէին տալիս: Այդ բացը լրացնելու համար Կ. Պոլսի մի խումբ երևելի ամիրաներ իրենց միջոցներով կամովին եվրոպական վարժարաններ էին ուղարկում ընդունակ, աշխատասեր և ուշիմ հայորդիների: Սկզբնական շրջանում նրանք կրթություն էին ստանում Իտալիայում, հիմնականում Միխիթարյան միաբանության ջանքերով հիմնված Մուրադյան և Ռափայեյան վարժարաններում: 1840-ական թվականների վերջերին պոլսահայ երիտասարդության համար կրթություն ստանալու գլխավոր կենտրոնը դարձավ Փարիզը: Եվրոպական լուսավորության, առաջադիմության և 1848 թ. ֆրանսիական հեղափոխության գաղափարներով ոգևորված մի խումբ երիտասարդ մտավորականներ, վերադառնալով հայրենի Կ. Պոլիս, ձեռնամուխ եղան ազգի կրթության, դաստիարակության գործին: Նրանք հիմնեցին բազմաթիվ հասարակական, կրթական, մշակութային ընկերություններ, որոնք հայրենանվեր լայն գործունեություն ծավալեցին: 1859 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսում հիմնվեց «Մուրադյան և Ռափայեյան աշակերտաց ընկերությունը», որի հիմնադիրները ընդհատումներով գործող «Համագգեաց ընկերության» անդամներն էին: Ընկերության անդամները Եվրոպայում սովորելու տարիներին առնչվել էին մասոնության հետ, իսկ ոմանք անդամագրվել էին նաև ազատ որմնադիրների օթյակներին: Ընկերության հիմնադրումը տեղի է ունեցել մասոնական օթյակների հավաքույթների նմանությամբ: Ընկերության որոշ անդամներ դարձան հասարակական ակտիվ գործիչներ և

<sup>1</sup> Տե՛ս «Մասիս», 1870, թիվ 1037:

<sup>2</sup> Տե՛ս Պողոսեան Հ. Եփրեմ Վ., նշվ. աշխ., էջ 66:

արևմտահայ ազգային սահմանադրական շարժման մասնակիցներ: Նրանց մի մասը Կ. Պոլսում գործող եվրոպական մասոնական օթյակների անդամներ էին: 1860-ական թվականների սկզբին ընկերության անդամներից ոմանք դարձան հայկական «Տիգրան» և «Մեր» օթյակների անդամ: Այս օթյակների հիմնադրումով «Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերությունը» աստիճանաբար դադարեց ակտիվ գործելուց և 1871 թ. փակվեց:

**Феликс Мовсисян – *Связи константинопольского «Ученического общества Мурадян и Рафаэлян» с масонством***

*Ключевые слова* – конгрегация Мхитаристов, Венеция, Париж, танзимат, реформа, образование, гимназия, объединение, масонство, ложа

До реформ, осуществленных во время первого этапа Танзимата, немусульмане в Османской империи не могли получать образование в специализированных гимназиях. Армяне Константинополя получали образование в основном в национальных гимназиях, которые не давали всесторонних светских научных знаний. Чтобы восполнить этот пробел, группа видных амиров – богатых и влиятельных армян Константинополя – на свои средства добровольно посылала в европейские гимназии способных, трудолюбивых и сообразительных армянских юношей. На начальном этапе они получали образование в основном в Италии – в гимназиях Мурадян и Рафаэлян, основанных усилиями Конгрегации мхитаристов. С конца 1840-х гг. главным образовательным центром для константинопольской армянской молодежи стал Париж. Группа молодых интеллигентов, воодушевленная идеями европейского просвещения, прогресса и французской революции 1848 года, возвратившись в родной Константинополь, взялась за организацию национального образования и воспитания. Они основали многочисленные общественные, образовательные, культурные организации, которые развернули широкую патриотическую деятельность. 7 января 1859 г. в Константинополе было основано «Ученическое общество Мурадян и Рафаэлян», учредители которого были членами действовавшего с некоторыми перерывами «Общенационального общества». Члены общества во время учебы в Европе соприкоснулись с масонством, а некоторые из них даже вступили в ложи вольных каменщиков. Организация общества напоминала собрания масонских лож. Некоторые представители общества стали активными общественными деятелями и участниками западноармянского национального конституционного движения. Часть из них вступила в европейские масонские ложи, действовавшие в Константинополе. В начале 1860-х гг. некоторые члены общества вошли в состав армянских лож «Тигран» и «Любовь». После формирования этих лож константинопольское «Ученическое общество Мурадян и Рафаэлян» постепенно прекратило активную деятельность, а в 1871 г. закрылось.

**Feliks Movsisyan – *The Relations of “Murad-Raphaelian Students’ Association of Constantinople” with Freemasonry***

*Key Words* – Mechitarist Unity, Venice, Paris, tanzimat, reform, education, college, unity, Masonry, Lodge

In the Ottoman Empire before the reforms implemented at the first stage of Tanzimat, the non-Muslim population didn't have any access to educational colleges. The Armenians of Constantinople got education mainly in national colleges, which didn't give comprehensive



and secular academic education. In order to fill up the gap a group of eminent Armenian figures sent smart and diligent Armenian learners to some European colleges at their own expense. At first the students got education in Italy, mainly in Murad-Rapaelian colleges established with the efforts of the Mechitarist Unity. By the end of 1940s the centre of education for the Armenian youth of Constantinople became Paris. A group of young intellectuals inspired by the ideas of European enlightenment, progress and French Revolution of 1848 returned to Constantinople and set about the education of their own nation. They established a great number of non-governmental, educational and cultural associations, which promoted patriotic activity throughout the city. On January 7, 1859, “The Murad-Rapaelian Students’ Association” was established in Constantinople, the founders of which were members of “All-Armenian Association”. The members of that Association made contacts with the masonry during their study in Europe, some of them were affiliated to the free masons’ lodges. The Association foundation was quite similar to the masonic lodge gatherings. Some members of the Association became active public figures and constitutional movement participants. Some of them were members of European masonic lodges working in Constantinople. At the beginning of the 1860s some members of the Association became members of the Armenian “Tigran” and “Ser” Lodges. At the foundation of these lodges “The Murad-Rapaelian Association” stopped its activity in 1871.

Ներկայացվել է 07.09.2020

Գրախոսվել է 04.02.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021